

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱԴԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

28 դեկտեմբերի 2015 թ.

N 919-Ն

ք. Ստեփանակերտ

ՍԱՀՄԱՆԱՅԻՆ ԵՎ ՌԱԶՄԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՆՏԱՌՆԵՐԻ
ՈՒ ԱՆՏԱՌԱՅԻՆ ՀՈՂԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԿԱՐԳԸ
ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության անտառային օրենսգրքի 43-րդ հոդվածը՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը **ո Ր Ո Շ ՈՒ Մ է**.

1. Սահմանել սահմանային և ռազմական նշանակության անտառների ու անտառային հողերի օգտագործման կարգը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱԴԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Կ Ա Ր Գ

ՍԱՀՄԱՆԱՅԻՆ ԵՎ ՌԱԶՄԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՆՏԱՌՆԵՐԻ ՈՒ ԱՆՏԱՌԱՅԻՆ ՀՈՂԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով սահմանվում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության սահմանային և ռազմական նշանակության անտառների ու անտառային հողերի օգտագործման կարգը:

2. Սահմանային նշանակության անտառներ ու անտառային հողեր են սահմանային շերտում գտնվող՝ մինչև 1 կիլոմետր շառավղով տեղակայված անտառներն ու անտառային հողերը:

3. Ռազմական նշանակության անտառներ ու անտառային հողեր են ռազմական օբյեկտների սահմանների շուրջ՝ մինչև 300 մետր շառավղով տեղակայված անտառներն ու անտառային հողերը:

4. Սահմանային և ռազմական նշանակության անտառների ու անտառային հողերի սահմանների վերաբերյալ եզրակացություն է տալիս Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պաշտպանության, ազգային անվտանգության և անտառների կառավարման բնագավառների պետական լիազոր մարմինների համապատասխան մասնագետներից կազմված, անտառների կառավարման բնագավառի պետական լիազոր մարմնի կողմից հաստատված հանձնաժողովը՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսդրության համաձայն:

II. ԱՆՏԱՌ-ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ

5. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության անտառների կառավարման պետական լիազոր մարմինն իրականացնում է վերահսկողություն սահմանային և ռազմական նշանակության՝ պետական սեփականություն հանդիսացող անտառների ու անտառային հողերի պահպանության և պաշտպանության նկատմամբ՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

6. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ազգային անվտանգության և պաշտպանության բնագավառների պետական լիազոր մարմիններն ապահովում են անտառների կառավարման և անտառների նկատմամբ վերահսկողություն իրականացնող պետական լիազոր մարմինների կողմից կատարվող աշխատանքներում ներգրավված անձանց անվտանգությունը՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

7. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ազգային անվտանգության և պաշտպանության բնագավառների պետական լիազոր մարմիններն անտառների կառավարման և անտառների նկատմամբ վերահսկողություն իրականացնող պետական լիազոր մարմինների ներկայացուցիչներին սահմանային և ռազմական նշանակության անտառներում ու անտառային հողերում իրենց լիազորություններն իրականացնելու համար տրամադրում են թույլտվություններ:

8. Սահմանային և ռազմական նշանակության անտառներում ու անտառային հողերում անտառօգտագործումն իրականացվում է անտառաշինական նախագծերին համապատասխան, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ազգային անվտանգության և պաշտպանության բնագավառներում պետական լիազոր մարմինների հետ համաձայնեցված:

9. Սահմանային և ռազմական նշանակության անտառներն ու անտառային հողերը վարձակալության և անհատույց օգտագործման չեն տրամադրվում:

10. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ազգային անվտանգության և պաշտպանության բնագավառների պետական լիազոր մարմինները սահմանային և ռազմական նշանակության անտառներում ու անտառային հողերում, տեղեկացնելով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության անտառների կառավարման բնագավառի պետական լիազոր մարմին, կարող են իրականացնել այլ հատումներ:

11. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ազգային անվտանգության և պաշտպանության բնագավառների պետական լիազոր մարմիններն իրականացնում են սահմանային շերտի ու ռազմական օբյեկտների տարածքներում գտնվող սահմանային և ռազմական նշանակության անտառների ու անտառային հողերի պահպանությունը:

12. Սահմանային և ռազմական նշանակության անտառներում ու անտառային հողերում կենդանական աշխարհի վերարտադրության կազմակերպման և օգտագործման, մշակութային, առողջարարական, սպորտի, հանգստի ու զբոսաշրջության, ինչպես նաև պետական սահմանի հետ չկապված այլ գործունեության նպատակով անտառօգտագործում չի թույլատրվում:

III. ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ԵՎ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ

13. Սահմանային և ռազմական նշանակության անտառների ու անտառային հողերի մոնիթորինգն ու վերահսկողությունն իրականացվում են Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

IV. ՀԱՄԱՏԵՂ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ

14. Սահմանային և ռազմական նշանակության անտառներում ու անտառային հողերում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության անտառների կառավարման բնագավառի պետական լիազոր մարմինը, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության անտառային օրենսգրքով սահմանված իր իրավասություններն իրականացնելիս, յուրաքանչյուր տարվա հունվար ամսվա 2-րդ տասնօրյակում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ազգային անվտանգության և պաշտպանության բնագավառների պետական կառավարման լիազոր մարմիններ հաստատման է ներկայացնում անտառային միջոցառումների ծրագիրը, ժամանակացույցը և աշխատանքներն իրականացնող ֆիզիկական ու իրավաբանական անձանց ցանկը, որոնց մեջ կատարված փոփոխությունները տասնօրյա ժամկետում ներկայացվում են համապատասխան պետական կառավարման լիազոր մարմիններ:

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ**

Լ. ԳՐԻԳՈՐՅԱՆ